Աւելի ուշ, Անիում՝ լքեալ, անգմբէթ ու անխաչ եկեղեցու շուրջը ցրածող հօտը տեսնելով, հասկա-ցայ, որ ես մի նոր դաւանանքի կարիք ունեմ արդէն եւ այդ դաւա-նանքն իմ ԻՍԿԱԿԱՆ ԷՈՒԹԻԻՆԸ ՃԱՆԱԶԵԼԸ է: Կոմիտասն ասում էր, որ միայն անասունները ոչինչ փոխ չեն առնում իրարից, բայց ինՉ ԵՆՔ ՄԵՆՔ ՓՈՈՍ ԱՌԵԼ ԵՒ ԻՆՉ՝ ՆՐԱՆՔ:

Նրանք ՎԱՆՔ ԵՆ ՓՈՈՍ ԱՌԵԼ, ԱՄՈՒՐ ՏՆԵՐ, որոնցում այսօր էլ իրենց վարչական հիմնարկներն են աշխատեցնում, փոխ են առել գեւ-եր...

Իսկ ինչ ենք մենք փոխ առել. Թրքիչ փոփ, օճառ, հագուստ, թրքա-կան սուրճ ...

Շաբ.ը էջ 19

### ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐ. «ԴՈՒՆ ՀԱՅԵՐԵՆ ԿԸ ԽՕՍԻՍ»



#### ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ

1990, Խորհրդային Միութեան փլուզում եւ տարանջատում, հա-մայնավար կարգ ու սարքի վերջա-ւորութիւն: Ստեղծում՝ անկախ հան-րապետութիւններու, որոնց մէջ է նաեւ մայր հայրենիքը՝ Հայաստա-նը: Անկախ պետականութիւնը հպարտութիւն էր ու տակաւին է բոլորիս համար: Մեր կազմակեր-պութեան՝ Աստուածաշունչի ընկե-րակցութեան համար, այս թուա-կանին նաեւ բացուեցան աշխա-տանքային մեծ կարելիութիւններ եւ նոր հորիզոններ: Մէկ կողմէ նախկին Խորհրդային Միութեան մաս կազմող պետութիւնները, որոնք անկախացած էին եւ ստեղծած՝ ինքնուրոյն կարգ ու սարք, իսկ միւս կողմէ՝ նախկին Արեւելեան Եւրոպայի երկիրները, որոնք դուրս եկած էին համայնավար վարչու-թեանէն՝ ստեղծելով ազատ պետա-կանութիւն: Այս բոլոր հանրապե-տութիւններուն մէջ գործող եկե-ղեցիները դարձան աւելի ազատ ու ինքնիշխան, անոնք հրաւիրեցին մեր կազմակերպութիւնը՝ ստեղծե-լու համար Աստուածաշունչի ընկե-րութիւններ իւրաքանչիւր երկրի համար:

Բայց կային լեզուական, նաեւ կենցաղային, յարաբերական ու մշա-կութային տարբերութիւնները, զորս պէտք էր նկատի առնէինք: Շատ քիչ պատահած էր, գրեթէ եզակի, որ անգլերէն խօսէին նախ-կին խորհրդային ու Արեւելեան Եւրոպայի երկիրներու մէջ: Իսկ մեր կեդրոնական գրասենեակին համար իւրաքանչիւր շրջանի տե-ղական լեզուին տիրապետող, նե-րառեալ՝ ուսուցիչ, գտնելը անկա-րելի էր:

Հայաստանի պարագային լու-ծումը եւ կարգադրութիւնները եղան յարաբերաբար դիւրին եւ արագ: Արդարեւ, չուշացաւ մեր պատաս-խանատուներուն հաղորդակցու-թիւնը ինձի հետ՝ խնդրելով, որ ստանձնեմ Հայաստանի մէջ Աստ-ուածաշունչի ընկերակցութեան գրասենեակն ու գործի կազմակեր-պումը՝ գործակցաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: «Դուն հայերէն կը խօսիս եւ քեզի համար դժուար չէ հաղորդակցիլը եւ յա-րաբերիլը Հայաստանի մէջ», եղաւ իրենց հաստատ համոզումը:

Այսպիսով սկսան իմ աշխա-տանքներս, թերեւս նաեւ առաքե-լութիւնս Հայաստանի մէջ՝ յաճա-խակի այցելութիւններով, եւ եր-կարեցան հինգ տարիներու վրայ մինչեւ 1996:

Հայրենիքն էր... Հողը, լեզուն

եւ մշակոյթը: Ու տակաւին՝ Չուրը, ուտելիքը եւ յարաբերութիւննե-րը: Հայկական էր ամէն ինչ, կ'ապ-րէիր քուկը ըլլալու գիտակցու-թիւնը եւ զգացումը, եւ որ բոլորը միասին կը կազմէին մէկ ամբող-ջութիւն: Նոյնիսկ երբ խօսուածը արեւելահայերէն է, եւ որոշ բառեր եւ արտայայտութիւններ այդքան ալ արագ կարելի չէր ընկալելը, բայց տակաւին իմս էր՝ ինքնու-թիւնս... Բայց այս բոլորը, այդ օրերուն՝ 1991-ին ու անկէ ետք դիւրին պարունակի մէջ չէին...

Թէեւ տակաւին անկախու-թիւնը նոր ձեռք ձգուած էր, բայց վրայ հասած էր արցախեան պատե-րազմը, ու տակաւին կային շրջա-փակումը եւ անոր պատճառած տնտեսական ահաւոր նեղութիւնը: Չհաշուած՝ 1988-ի երկրաշարժի ահաւոր աղէտը ու անոր հետե-ւանքները:

Երեւանի փողոցներէն քալե-լով՝ կը զգայիր լքուած վիճակը քաղաքին: Ելեկտրականութիւնը՝ օրական հազիւ մէկ ժամ: Հացը՝ դժուար ճարելի: Առաւօտ կանուխ ժամերէն սկսեալ արդէն փուռերու առջեւ մարդիկ հերթի կը սպասեն, որպէսզի հացի իրենց բաժինը ձեռք ձգեն: Բենզինը կը վաճառ-ուէր երկար կարգերու մէջ կանգ-նած՝ փողոցներու անկիւնը: Չէին գործեր կայանները: Գիները երե-ւակայական էին, գէթ՝ տեղական պայմաններու համար, բայց նաեւ կը տարուբերէր մէկ տեղէն միւսը: Որքան բարձրանար գինը, պէտք էր հասկնալ, թէ՛ ալ աւելի գուտ ու մաքուր է, թէ՛ Չուր կամ այլ նիւթ չէ խառնուած մէջը: Ճամբաներուն վիճակը բաւական դժուար անցա-նելի էր՝ փոտերով լեցուն, եւ նո-րոգուելու հեռանկարները քիչ մը պղտոր եւ հորիզոնէն անդին երե-ցող-չերեցող կարելիութիւն էին, վառելանիւթ գրեթէ չկար: Իսկ տաքնալու եւ տունները ջերմացնե-լու համար մարդիկ կը կարէին ծառերը, եւ փողոցները կը տեսնէ-իր մարդիկ, որոնք ծառերու կոճ-ղեր կտրած՝ կը տանէին տուն:

Կը մնայի Մայր Աթոռի վա-նատունը, որ նաեւ կը կոչուէր՝ Հոթել Իսկենտէր: Իսկ Իսկենտէրը՝ մուսալեուցի, Այնճարէն Հայաստան եկած էր ներգաղթի ժամանակ՝ 1946-47 տարիներուն: Ինք եւ կի-նը՝ Ծաղիկը, ստանձնած էին վանա-տան մատակարարութիւնը: Իս-կենտէրին համար ես, հայրենակից էի, անկախ անկէ, որ այնճարցի չէի: Կը բաւէր, որ լիբանանցի եմ եւ Պէյրութէն կու գամ: Կար մայ-մինչեւ 1996:

Շաբ.ը էջ 19

# ԻՆՉՈՒՒ ԻՎԱՍՍԱՆ-ԱՐՑԱՆ ՍԱՔՈՒՐ ԻՎՅԵՐԵՆ ԶԵՆ ԳՐԵՐ ՈՒ ԽՕՍԻՐ

ՏՈՒՔԹ. ՅԱԿՈՒՐ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ

Ինչո՞ւ Հայաստանի եւ Արցախի ուսեալ դասակարգը մաքուր հայերէն բառապաշարով պիտի չգրէ ու չխօսի: Անհասկնալի է:

Խեղուած, ախտահարուած հոգեմտաւոր համակարգի ենթակայ է այսօր Հայաստանի հանրութիւնը: Ինչպէ՞ս ազգապահպանումի մասին կը գրեն ու կը քարոզեն, երբ իրենք այլասերած հայերէն կը գրեն ու կը խօսին: Իրենց հարցազրոյցները, յօդուածները, ելոյթներն ու յայտարարութիւնները կը վխտան եւ թիմուած են օտարամուտ հայերէն լեզուին խորթ բառապաշարով:

Ինչպէ՞ս հաւատալ իրենց ազգապահպանական քարոզութեան, երբ իրենք կը գործադրեն լեզուական այլասերումը: Հոգեմտաւոր այլասերումը տիրած է Հայաստանի որոշ մտաւորական եւ իշխանութեան ղեկին տիրացած խաւին մէջ, որ կը կարօտի ինքնամաքման եւ լեզուական մաքրագրումի:

Խօսինք փաստերով, կարդացէք Լոս Անճելոսի մէջ տպուած «Ասպարէզ» օրաթերթը կամ «Մասիս» շաբաթաթերթը, օտար բառեր կը վխտան, նախագահի, վարչապետի, կուսակցականի, նախարարներու, համալսարանի դասախօսներու մասին գրուած յօդուածները մէջ: Չմոռնանք նմանապէս լրագրողներն ու հաղորդավարները, բոլորն ալ մեղաւոր եւ չանցաւոր են լեզուական այլասերման այս օրուան ստեղծուած դրութեան համար: Այս մարդիկ չեն ուզեր լսել, սրբազան եւ ուղղել իրենց յանցագործ սխալները: Կ'արհամարհեն սփիւռքէն եւ Հայաստանէն եկած մղկտացող նկատողութիւնները, որովհետեւ իրենք են պաշտօնատէրները, այսինքն «Որոշումը եւ Ուժը» իրենց ձեռքն են:

Յաւալի եւ ցցուն ապացոյցը՝ ճղճիմ հոգեմտաւոր գործելաոճի: Այսօր հայոց «մեծաքանչը» ցեխի մէջ կը տապալակի: Ո՞վ պիտի փրկէ զայն ռուսա-անգլիա-ֆրանսիա-իտալական բառերու խառնուրդով ստեղծուած բառապաշարէն: Ո՞վ: Տնօրէ՞ն, ուսուցիչ, ուսանող, համալսարանական...:

Ոմանք պիտի ըսեն սովորութիւն եղած է: Փրոպան, ֆակուլտետ, պրոցես, ցենար, սենսացիա, կուլտուրա եւ այլն բառերու գործածութիւնը, շատ բարի: Լաւ սովորութիւնները որպէս առաքինութիւն թիւն պահեցէք Հայաստանի մէջ, իսկ վատ սովորութիւններէն որպէս մոլորութիւն ձերբազատուցէք, որպէսզի նոր սերունդը Հայաստանի եւ սփիւռքի մէջ չախտահարէք:

Վերջապէս Հայաստանի անկախութենէն 22 տարի ետք, Հայաստան բարեկարգուած է մասամբ (հագուստ, արդ ու զարդ, կենցաղ, շինարարութիւն, թանկարժէք ինքնաշարժ, անթիւ ճաշարաններ, եւ այլն, շատ լաւ, բարեկարգեցէք ձեր հայերէն բառապաշարը, որպէսզի սփիւռքէն եկած ուսուցիչները, չվերապատրաստուին լիցեցիա, էմպոնալ, էստրատային, ֆերմերային, ագրարային, փրոֆեսիոնալ, Ժանրը, Ժիւրի, ակտիւ, ակցիա, ապամոնթաժել, ֆիքսել, կորուպցիա, օբյեկտ, աւիաուղի, պոէզիա, եւ այլն բառապաշարով:

Հայերու մեծամասնութիւնը խորապէս ծանօթ է իր ազգային արժանիքներուն (լեզու, ճարտա-

րապետութիւն, մանրանկարչութիւն, երաժշտութիւն, գորգագործութիւն, ոսկերչութիւն եւ այլն, ուստի զանոնք չի գնահատեր եւ տարուած է ակներեւ կամ թաքուն օտարամոլութեան մոլուցքէն: Քանի որ չ'արժեւորեր, չի գնահատեր իր մայրենի լեզուին արժանիքը, կ'ապաւինի եւ կը գործածէ օտար բառերու խառնածին եւ անճոռնի նորակերտ բառամթերք, (աւտոմեքենայ, աւիատոմս, կինոթատրոն, սուբսիտաւորել, ինտեկրացման, հոսպիտալացուած(երբ հայերէն բառարաններու մէջ արդէն ունինք ասոնց համապատասխան, համարժէք հազարաւոր հայերէն բառեր:

Հայոց Յեղասպանութեան 100 ամեակի յիշատակման եւ ոգեկոչման նախաշնորհներու կեդրոնանալ եւ խոկալ թէ թուրքը ինչպիսի՞ ճիւղաւորային պատուհաս եւ աղէտ եղաւ հայու գլխուն:

Գործնական ինչպիսի՞ քայլեր պէտք է առնենք բռնցքաւորութեւն եւ մեր ինքնութիւնը պահելով պահանջատիրութիւնը շարունակելու: Մեր նախահայրերը ապրած եւ բազմացած են մեր պատմական հողերու վրայ: Թուրքը արմատախիլ ընելով հայութիւնը դար մը առաջ, ծրագրուած ոչնչացուց մեծմասամբ իր մայրենի լեզուն, աւանդութիւնները, երաժշտութիւնն ու սրբութիւնները: Այսօր «խառնածին հայերու» աւելի կը հանդիպինք քան թէ «բուն իսկական» հայու: «Խառնածին» ծնունդով, բառամթերքով, նիստ ու կացով, առողջանութեամբ, վարուելակերպով, բարքով եւ անունով: Օտարացած է հայը իր իսկ հայրենիքի մէջ, նամանակահատիկ տարագրութեան մէջ: Մենք մեր ակունքներէն հեռացած ենք, որովհետեւ մեր երկիրը խորթացուցած են 22 տարուան անկախ Հայաստանի իշխանաւորները, իսկ մեր պապենական հայրենիքը կը մնայ բռնագրաւուած մարդասպան թուրքի կողմէ:

Ամէն մի գիտակից հայ անհատ, որ կ'ապրի սփիւռքի տարածքին, որուն նախահայրերը ենթարկուած են թուրքիոյ կողմէ գործադրուած Հայոց Յեղասպանութեան որոնց պապենական հողերը բռնագրաւուած են թուրքերու կողմէ, կը զգայ իր մորթին ու հոգեվիճակին վրայ Յեղասպանութեան հետեւանքով այլասերման թարմ ու թարախակալուած, չբուժուած վէրքերը:

Մենք սփիւռքի մէջ կ'այլասերինք որպէս հետեւանք Հայոց Յեղասպանութեան: Մենք կը թափառինք աշխարհով մէկ, որովհետեւ մեր պապենական հողը բռնագրաւուած է եւ մեր ներկայ պատուիկ մը հայրենիքը չըջափակուած է թուրքիոյ կողմէ: Յեղասպանութիւնը կը շարունակէ քանդել եւ աւերել մեր պապերէն մնացած կիսականգուն տուններն ու եկեղեցիները պատմական Հայաստանի մէջ: Կ'ուզէ ոչնչացնել հայերու վերջին հետքերը իր պատմական հայրենիքի մէջ:

Մենք մեր լեզուն եւ աւանդութիւնները կը կորսնցնենք սփիւռքի մէջ, ենթակայ այլ մշակոյթներու, որովհետեւ չենք շրջապատուած մեզի պատկանող եւ հարազատ պապենական միջավայրով, լեռներով, գետերով, լիճերով, սրբավայրերով եւ հայերէն խօսող ժողովուրդով:

«Մասիս, մեզի պարտադրուած բռնագաղթով օտար երկիրներու մէջ պարտադրաբար կ'օտարանանք, ուստի կը շարունակենք ձուլուիլ «երգով ու պարով»:

Թուրքը ներկայ Հայաստանը տնտեսական աքցանի մէջ դրած ու իր դաշնակից մեծ ու փոքր երկիրներու հետ կ'ուզէ բնակչութենէն պարպել, որպէսզի ապագային հայը իրմէ հող չպահանջէ:

Անգլերէն Webster Seventh New Collegiate Dictionary բառարանին (տպուած 1976-ին), 429-րդ էջին հնդեւրոպական լեզուներու յատկացուած ճիւղաւորումներու ցուցակին մէջ, 12 ինքնուրոյն լեզուներէն մին հայերէնն է: Լատիներէնը յառաջացած է (Italic) իտալական խումբէն, որմէ սերած են իտալերէնը, ֆրանսերէնը, սպաներէնը, փորթուգալերէնը եւ այլն: Իսկ անգլերէնը հին գերմաներէնի (germanic) ճիւղէն: Ռուսերէնը սերած է արեւելեան (slavic) սլաւական ճիւղէ:

Հարց կը ծագի թէ Հայաստանի հայերը փոխանակ հարազատ գրաբարը օգտագործելու նոր բառակերտման համար, ինչու ազգախոյս մղումով կ'ապաւինին ու կը դիմեն լատիներէնի, ֆրանսերէնի, անգլերէնի, ռուսերէնի եւ իտալերէնի: Մինչ թրքալեզուախումբ երկիրները դէպի միասնական լեզուի կը ձգտին, իսկ հայերը ազգախոյս լեզուախօսութեան: Ապշեցուցիչ խելագարութեան արտացոլում:

Մինչ պետական այրեր, նախագահ, վարչապետ, նախարար, կուսակցական եւ այլն ազգային

միասնականութիւն եւ ազգապահպանում կը քարոզեն, սակայն իրենց գործածած բառապաշարը օտարամոլութիւն եւ այլասերում կը ցույց տան: Ե՞րբ պիտի դադրի այս հակոտնեայ գործելակերպն ու գործելատճը:

Անկախութեան 22 տարիները բաւարար չեղան որ «Հայաստանի պետական լեզուն գրական հայերէնն» է, գործնականօրէն կիրառելու եւ հաստատելու համար: Վերջ տանք խեղկատակութեան:

Հայերէն լեզուն Հայաստանի մէջ օրէնքի ուժով եւ պատժամիջոցներով պէտք է հաստատուի եւ մաքրագտուի, նախակրթարանէն մինչեւ նախագահի գրասենեակը:


Լեզուական այլասերումը կը ստեղծէ հոգեմտաւոր այլասերում, կը խցէ կապը պապենական հողի եւ աւանդութիւններու հետ: Արտագաղթի դրդապատճառներէն մին այլասերած լեզուամտածողութիւնն է, բացի անպաշտպանուածութենէն, անարդար -անպատժելիութենէ, տնտեսական անհաւասար մենաշնորհուածութենէ:

Մէրը հայերէն լեզուի հանդէպ նուազած է, սէրը հայկական հողի հանդէպ նուազած է, սէրը հայ անհատի հանդէպ նուազած է Հայաստանի մէջ, որովհետեւ կարգ մը օտարամուտ լեզուով եւ մտածողութեամբ անձիք տէր դարձած են Հայաստանի ղեկին:


Բոլորիս ծանօթ է որ աշխարհաբարը յառաջացած է գրաբար հայերէնէն: Ինչո՞ւ գրաբարը չվե-

Մար. ք էջ 19

Hosted by:



Lump  
Lark Musical Society



Renowned Pianist  
**Svetlana Navassardian**  
Performs in the Golden State  
**1 CONCERT ONLY**

September 28, 2013, 7:30 PM  
First United Methodist Church in Pasadena  
500 E. Colorado Blvd.  
Pasadena, CA 91101

**PROGRAM**

SOLO CONCERT PROGRAM

Saturday, September 28, 2013, 7:30 pm  
First United Methodist Church, Pasadena,  
500 E. Colorado Blvd. Pasadena, CA 91101

HAYDN  
Sonata in C Major No. 35

BRAHMS  
Klavierstücke Op. 76

CHOPIN  
Polonaise in C-sharp Minor Op. 26, No. 1  
Nocturnes  
Op. 9, No. 1 in B Minor  
Op. 9, No. 2 in E-flat Major  
Polonaise in A-flat Major Op. 53  
Mazurkas  
Op. 17, No. 2 in E Minor  
Op. 67, No. 1 in G Major  
Op. 67, No. 4 in A Minor  
Op. 30, No. 3 in D-flat Major  
Op. 17, No. 4 in A Minor

KOMITAS  
Lullaby

MANSURIAN  
Three Pieces for the Low Keys

# «ԷԶՄԻԱԾԻՆ Ի ԶՕՐԷ ԵՒ ԼՈՅՍ ՓԱՌԱՑ ԸՆԴ ՆՄԱ, ԶԱՅՆՔ ՅՆԶԵՑԻՆ, ՍԱՆԴԱՐԱՄԵՏՔ ԱՆԴՆԴՈՑ, ՏԵՍԵԱԼՔ ԶԼՈՅՍ ՄԵԾ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ, ՊԱՏՄԷ ՑՆԾՈՒԹԵԱՄԲ ԶԱՒԱՏԱՑԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ»

**ԵՐԷՅԿԻՆ ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼ-ԵԱՆ**

Սոյն տողերը սրտանց, անկեղծօրին, նախանձախնդրութեամբ, գերազանց համեստութեամբ, կը յանձնեմ թերթին, որպէս հայ առաքելական եկեղեցւոյ զաւակ, որուն համար հոգեկան հարստութիւն, փառք ու պատիւ կը համարեմ: Հայաստանեայց Առաքելական եկեղեցին իր նուիրապետական աթոռներով, գլուխը ունենալով Քրիստոսահիմն, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ Պատրարքութիւնը: Այս Աթոռները, մեր բարեպաշտ ու հաւատացեալ ժողովուրդին եւ կրօնական դասուն, նուիրական աթոռներն են, որոնք մինչեւ այսօր յարգանքի, երկիրդածութեան խորհրդանիշը դարձած են, հայ հաւատքին ու հայ ցեղին:

Հայ եկեղեցին, միշտ ինչպէս անցեալին, այսօր եւս իր նուիրապետական աթոռներով, բաւասանը հանդիսացած է անոր տառապանքներուն, չարչարանքին, ողջակիզումին, ինչպէս նաեւ ինդակիցը եւ մասնակիցը անոր յաջողութեան, ուրախութեան եւ ցնծութեան: Հայրենիքը, Հայաստան աշխարհը սիրած ենք ու կը սիրենք իր Ս. Էջմիածինով, կապուտակ Սեւանայ լիճով եւ հպարտ ու ճիւղասպիտակ բարձրագագաթ Արարատով:

Այս բոլորը եթէ անհետանան եւ յանձնուին միայն պատմութեան էջերուն, հայրենիքը կ'անհետանայ մշուշի նման, մեր մտքերէն եւ մեր էութենէն:

Սկիզբի դարերէն սկսած, Հայ Առաքելական եկեղեցին օրհնութեան աղբիւր, հաւատքի սիւն, հայ մշակոյթի ռահվիրա, ընկերային տնտեսական հաւաքական կազմակերպութիւններու փարոսը հանդիսացած է:

Մեր երկիրը, Հայաստան աշխարհը թիրախ դարձած է բարբարոս, վաշխառու կողոպտիչներու եւ այլազգներու արշաւանքներուն:

Հայ Առաքելական եկեղեցին դարձաւ ինամող ու գուրգուրացող մայրը իր զաւակներուն եւ ամէն միջոց գործադրեց ամօքելու անոնց ցաւն ու վիշտը: Պահելու ու պահպանելու Ս. Էջմիածինը վատ հորդաններէն, գրեթէ 13 անգամներ փոխադրուած է ուրիշ շրջաններ, մինչեւ հասած ու հաստատուած Կիլիկիա: Ու վերջապէս ապահով զգալով, տեղափոխուած եւ վերահաստատած իր աթոռը, վաղարշապատ քաղաքը՝ այժմու Ս. Էջմիածինը:

Լիբանանի հայահոծ գաղութին մէջ մեծցած ըլլալով, տեսանք ծաղկումը հայ եկեղեցիին, ծաղկումը հայ դպրոցներու, մշակոյթի տարածումը ամէն մարզի մէջ: Լիբանան, մայրիներու աշխարհը դարձաւ երկրորդ Հայաստան մը եւ կամրջեց մեզ հայրենիքին հետ ու ապրեցանք հայրենիքով, մեր երգերով, պարերով, արտասանութիւններով, թատրերգութիւններով եւ երազեցինք ազատ ու անկախ հայրենիք մը:

«Այժմ ունեցանք ազատ ու անկախ հայրենիք»:

Մեծ պատիւ եւ շնորհք մը տրուեցաւ ինձ, ասկէ չորս տարիներ առաջ ամիսի մը չափ մնացի

Ս. Էջմիածին: Սփիւռքի զանազան երկիրներէն եկած էին հայ ուսուցիչներ: Ինձ վիճակուեցաւ կրօնք եւ արեւտմահայերէն դասաւանդել թիֆլիսէն ժամանած հայ ուսուցիչներուն: Ինչ բախտաւոր զգացի երբ ինձ տրամադրուեցաւ դասաւանդել: Հոն էր իր աթոռը եւ գրասեղանը: Ինչ հոգեկան յուզում ապրումներ ունեցայ: Կոմիտաս, սակայն մեծ է Կոմիտասը, հսկայ մը, հանճար մը:

Այժմ անցնինք զիս կրծող եւ ինձ նման մտածողներու անձկութեան մասին:

21րդ դարու սեմին հասած ենք: Կը պահանջուի բացարձակ խոհեմութիւն եւ իմաստութիւն: Որեւէ եկեղեցական, ըլլայ ան վեհափառ Հայրապետ, առաջնորդ սրբազան, քահանայ հայր, պիտի չի փափաքէր իր քահանայազորութեան շրջանին իր եկեղեցին անկուծի մէջ տեսնել:

Մարդկային տկարութիւններ եւ թերութիւններ կրնան ունենալ, բայց երբեք չեն կրնար հաւատալ որ դաւաճանեն այն կրօնական հաստատութեան որ կը քահանայազորեն ու կը հովուեն: Ամէն եկեղեցական թեմ ունի իր պատկան մարմինները եկեղեցական հարցերով զբաղող: Հարցերը չեն լուծուի փողոցներու, տուններու, լրագիրներու մեկնաբանութեամբ, լրջութիւնը կարեւոր է: Աւելի կրակ չի տանք ու չի բորբոքեցնենք, մոլթ ծրագիրներ շրջապատած են մեզ:

Աղօթենք, որ կուտակուած ամպերը անհետանան:

Ամէն Կիրակի սուրբ եւ անմահ պատարագի ընթացքին, կը յիշատակուի սուրբերու անուններ, առաքեալները, եկեղեցւոյ հայրերը, մարտիրոսները, մեր նահատակները, ինչպէս նաեւ օրուան վեհափառ հայրապետը, առաջնորդ սրբազանը եւ պատարագի քահանային անունները:

Բարձրեալն Աստուծոյ կը խնդրենք, որ շնորհէ իմաստութիւն, սէր, առողջութիւն, որպէսզի իրենց վստահուած սրբալուստ առաքելութիւնը Աստուծահանձոյ պատուիրանները կիրարկեն եւ մեր սուրբ եկեղեցին շարունակէ իր սփոփարար ու երկնառաք առաքելութիւնը, թէ հայրենիքի եւ թէ սփիւռքի մէջ:

Որքան ցանկալի պիտի ըլլար, պատկան անձեր, մարմիններ, որպէս քաղաքակիրթ ժողովուրդ հարցերը արծարծուէին, հարթուէին սիրոյ եւ յարգանքի մթնոլորտին մէջ:

Որքան փափաքելի պիտի ըլլար, երբ Ամենայն հայոց վեհափառ Հայրապետը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, միասնաբար բարձրադրակ գոչեն եւ յայտարարեն... Մէկ սիրտ, մէկ հոգի միացեալ անբաժան միութիւնը:

Թող իրագործուի այս սրտառուչ աղերսը, թող մեր աղօթքներն ու շարականները ընդմիշտ բարձրանան հայ եկեղեցւոյ խորաններէն, կամարներու տակ թեւածող մաքրամաքուր մեր սուրբերու միախառնումով մեր շրթունքներէն բխին աղօթքի մրմունջներ: Փառք, պատիւ եւ երկրպագու-

# ՎԵՐԱՄՈՒՏ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԵԶ



09.14.2013

14 Սեպտեմբեր 2013, Շաբաթօր Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը 2013-14 տարեշրջանին համար վերաբացաւ իր դռները: Նախկին եւ նորեկ աշակերտներու, ծնողներու, ինչպէս նաեւ ուսուցչական կազմի ներկայութեամբ՝ խանդավառ մթնոլորտի մէջ դպրոցը կատարեց վերամուտի իր աւանդական հաւաքոյթը:

Իր բացման խօսքին մէջ տնօրէն Պրն. Նորայր Տատուրեան բոլորին ներկայացուց դպրոցական եւ դասաւանդման բարենորոգուած ծրագիրը, որ կը ներառէ նոր դասագիրքեր, դասաւանդման ամենաարդիական multiple intelligence, տեսակի կիրարկում, ինչպէս նաեւ զեղարուեստական յայտագիրներու առաւել ճոխացում տարեկան յայտագիր:

Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարան-

նը իր հինգ դասարաններով ու մեծամասնութիւնը հայկական ամենօրեայ վարժարաններու մէջ պաշտօնավարող փորձառու ուսուցիչներով կը սպասարկէ Ս. Կապրիէլ հովիտի 5-12 տարեկան հայրդիներուն, որոնք այլեւայլ պատճառներով զրկուած են հայկական ամենօրեայ վարժարան յաճախելէ: Լեզուական ունակութիւններու առընթեր՝ վարժարանը աշակերտներուն կ'աւանդէ տոհմիկ արժէքներ, հայկական աւանդութիւններ, հայ մշակոյթը իր բոլոր երեսներով, ինչպէս նաեւ հայոց պատմութիւնը՝ երեխաներուն մատչելի լեզուով եւ եղանակներով:

Արձանագրութիւնները բաց պիտի մնան Հոկտեմբեր ամսոյն ընթացքին: Հետաքրքրողները կրնան դիմել եկեղեցւոյ գրասենեակին ու ստանալ պէտք եղած անհրաժեշտ տեղեկութիւնները:

Թագաւոր երկնաւոր գեկեղեցիս քո անշարժ պահեա, եւ զերկրպագուս, անուանդ քում պահեա՝ ի խաղաղութեան:

# ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ

Սիրելի հայրեմակիցներ  
Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ երեխաների ֆօնտի մարդասիրական աշխատանքները օրրատօրէ ծաւալուով է և այժմ ֆօնտի ուշադրութեան կենտրոնում է ՀՀ Արարատի մարզում գտնուող, սահմանամերձ Դալար գիւղի մանկապարտէզ-դպրոցը,

որի ծաւալը 44,000 քառակուսի ոտք, 2 յարկից բաղկացած հսկայածաւալ մի կառոյց է: Ամիսներ առաջ շէմֆի նորոգութեան աշխատանքները սկսել են: Յուսով ենք, որ Աստուծոյ և մեր ազնուասիրտ և առատաձեռն ժողովրդի օգնութեամբ, Դեկտեմբեր 2013 թւականին «Դալար» մանկապարտէզ-դպրոցը կ'ընդունի շուրջ 400-ից աւելի՝ 3-6 տարեկան անտուն, կարիքաւոր, անձնող մանուկներին:

Մերֆօնտի 14-ամեակի շէմֆի, «Դալար»ը կը լինի մեր գործունէութիւնների գլուխ-գործոցը՝ Խարբերդ հաշմանդամ երեխաների կենտրոնի, Սպիտակի դպրոցի և մարզաւանի և Պառաւախար սահմանամերձ գիւղի դպրոցի կառոյցներից յետոյ:

Ա. Մնունդի հանդիսութիւններին դուր լաւ ծանօթ է, որը կազմակերպում ենք ամէն տարի Նոր Տարւայ օրերին մեր կարօտեալ երեխաների համար: Հպարտ ենք ասելու, որ անցած 13 տարիների ընթացքում 170 հազար հայրենի երեխաներին բաշխել ենք մեզին և կազմակերպել տօնական հանդէսներ:

Սիրելի հայրեմակիցներ, մեր բոլոր յաջողութիւնների և յաղթանակների առիծի բաժինը պատկանում է ձեզ: Ձեր վեհափառ, մարդկային վերաբերմունքը, ձեր գրառատ խղճի ձայնը անվերջ յօդանջում է մեր հայրենի բախտից, հարապատենքից կտրուած հազարաւոր երեխաների սրտերում:

Եկէք միասին «Դալար» մանկապարտէզ-դպրոցը դարձնենք Պարոյր Սեւակի «Անլուծելի գանգակատուն»ը, որի յօդանջների ներքոյ հայօրէն կը բորբոսան հարիւրաւոր երեխաների սրտերը... Սեպտեմբեր 29, 2013-ը թող դառնայ հայրենի կարօտեալ երեխաների ցնծութեան օր...

Փա՛նֆ ու պատիւ ձեզ, սիրելի հայրդիցներ:  
  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԳՈՐԿ ԶԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖՕՆՏ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐԾԻՆ

Ուշադրութիւն. Միևչե Սեպտ. 28 մեզ հասնող ձեր նուէրները կը յայտարարուեն Սեպտ. 29, 2013-ի Թելեթոնի ընթացքում, 4 հեռուստակայաններից:

### ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ «ՌԵՔՎԻԵՄ ՊՐՈՄԵԹԵՎՍԻ ՀԱՄԱՐ»



Խմբագրությունն շնորհակալություններով ստացել է՝ Արմեն Ալանի հեղինակած՝ «Ռեքվիեմ Պրոմեթեյսի համար» ստուգարածալը՝ 557 էջերին բաղկացած լաուրակ տպագրությունը՝ զիրքը, որը տպագրվել է 2012-ին Լոս Անջելեսում: Գիրքը կը լինի 20 եւ 21-րդ (1950-2012) դարերի համաշխարհային յուզիչ, տաղանայիչ, կարեւոր ու հետաքրքիր դէպքերով ու իրադարձություններով հակիրճ տեղեկություններ:

Գիրքը՝ ըստ հեղինակին, որակուներ է որպէս՝ «Վէպ խրոնիկա» ընդգրկելով խրոնիկ դէպքեր: Հե-

### ՅՈՒՇԵՐ «ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ»

ԱԻԵՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Այն երջանիկ տարիներին եւ նշանակուել էի Քաղաքի Քալաւա գիւղի պատասխանատու: Մի քանի տասնեակ հայ ընտանիքներ էին ապրում մեր գիւղում: Սուրբ Յակոբ եկեղեցին, չնայեա՞ծ ծխատէր հովիւ չունէր, բայց եւ այնպէս միշտ դուռը բաց էր հաւատացեալների համար: Արաքի հայոց եկեղեցական խորհրդի կողմից մեզ յայտնեցին, որ յառաջիկայ Ուրբաթ օրը պետական մի քանի պաշտօնեաներ մեր հրաւէրով պիտի գան գիւղ, նշելու համար երկրի Արքայի տարեդարձը: Մեզ պատուիրուեց, որ այդ կապակցութեամբ միջոցներ ձեռք առնեն հանդիսութիւնը պատշաճ ձեւով կազմակերպելու համար:

Մեր գիւղի երիտասարդները գործի անցան: Ամբողջ եկեղեցին շրջակայ բակը եւ յարակից փողոցները մաքրուեցին, կարգի բերուեցին: Որոշուած օրը գիւղի երէցները եւ եկեղեցական խորհրդի անդամները պատշաճ հագուստներով հաւաքուեցինք եկեղեցու մօտ եւ սպասում էինք հիւրերին դիմաւորելու համար: Փոքր սեղանների վրայ ճաշակով շարուած էին տեսակ-տեսակ պտուղներ, քացրեղէններ եւ թխուածքներ: Առաւօտեան ժամի 10ին հիւրերը երեք մեքենաներով հասան գիւղ: Պատշաճ կերպով դիմաւորեցինք հիւրերին եւ առաջնորդեցինք եկեղեցի: Հիւրերի մէջ էին Արաքի գաւառապետը, քաղաքապետը, գինուորականներ եւ մի քանի այլ պաշտօնեաներ: Բարի պալատեան խօսքերից յետոյ հիւրե-

ղինակը իր խօսքին մէջ կը տեղեկացնէ իր անդրադարձը հայութեան մասին եւս, մէջբերենք՝ «Նաեւ 20-րդ դարի 1950-1990 թթ. ապրած ու ապրող հայ (հերթական կորսուած) սերնդի մասին կը պատմէ այս գիրքը-աւարտուած ու շարունակուող համաշխարհային վճռորոշ իրադարձությունների ծաւալուն համայնապատկերում...»: Հեղինակի խօսքի մի այլ պարբերությունում կը կարդանք՝ «...Քաղաքական սպանություններ, անյայտ նահատակներ ու մոռացուած հերոսներ, Բիթլզ եւ Փարաջանով, աֆղանական պատերազմ եւ «վերակառուցուած» ԽՍՀՄ յատուկ ծառայությունների գաղտնագերծուած էջեր եւ շարունակուող կեղծիքների նոր գալարներ...»:

Գրքի բովանդակությունն երկար ցանկը կ'ապացուցէ նիւթերու բազմազանությունը: Հեղինակը օգտուներ է տարատեսակ աղբիւրներից: Կարգալով գիրքը ընթերցողի դէմ յանդիման կը յառնէ լայնատարած հորիզոն բազմապիսի հետաքրքրական եւ պատմական անցուդարձերով:

### «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ»



«Մասիս»-ի խմբագրությունը շնորհակալություններով ստացած է գաղութիս ծանօթ բժիշկներէն գրական եւ հասարակական գործիչ Դոկտ. Ալֆրէտ Դանիէլեանի կարեւոր մէկ աշխատությունը՝ «Ժամանակակից Հիւանդությունների ճա-

նաչում»ը վերտառութեամբ, որն բաղկացած է 280 մեծադիր էջերէ, մաքուր եւ ճաշակաւոր տպագրութեամբ:

Անուանի բժիշկը քանի մը բժշկական գիտական եւ գրական աշխատություններու հեղինակ է: Այդ գիրքերը ճոխ եւ հետաքրքիր բովանդակություններով, արժանի տեղ գտած են առողջապահական ասպարէզին մէջ: Յարգարժան դոկտորը լաւագոյնս ճանաչուած դէմք մըն է մեր գաղութին մէջ: Ան իրանում կը պատկանի այդ առաջադէմ բժիշկներու շարքերուն, որոնք իրանի մէջ հիմնած են տարրալուծարաններ եւ մի քանի տասնեակ տարիներ ծառայած են հայ եւ պարսիկ ժողովուրդներուն: Դոկտ. Դանիէլեանը եղած է նաեւ իրանահայ Գրողներու Միությունի նախագահ: Կը շնորհակարտները մեր շնորհաշատ բարեկամը մաղթելով նորանոր արժէքաւոր հատորներու հրատարակում: Այս խիստ օգտակար գիրքը կրնաք ձեռք բերել Կլեմէնտիէի հայկական գրախանութներէն:

«Մասիս»

**ԳԻՏԱԺՈՂՈՎ**

**Սուիրուած՝**

**Մեսրոպ Մաշտոցի Ծննդեան 1650 Ամեակին**

**Շաբաթ՝ Հոկտեմբեր 26, 2013**

Վուսպրի համալսարան - Woodbury University  
7500 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504  
կ.ա. ժամը 9:00-էն մինչեւ կ.ե. ժամը 5:00

**ԴԱՍԱԽՕՍՆԵՐ՝**

Հայր Լեոն Զեքիեան  
Աբէլ Բինյ. Մանուկեան  
Դոկտ. Յակոբ Կիլլիւճեան  
Դոկտ. Երուանդ Զօրեան  
Դոկտ. Արախամ Տէրեան  
Դոկտ. Սրբուհի Հայրապետեան  
Դոկտ. Ռոպրթ Հիւսըն

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ**

Արարատ Էսփիճեան Թանգարան  
Թեքեան Մշակութային Միութիւն  
Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն  
Նոր Սերունդ Մշակութային Միութիւն  
Պոլսահայ Միութիւն

**ՄՈՒՏԲԸ ԱԶՍ**



### ԻՆՉՊԻՍԻ՞ ԲԱՐԵԿԱՍՈՒՅԻ ՍԸ ՈՒՆԷՔ

1) Ձեր մտերիմ բարեկամուհիին՝

Ա- Կը պատմէք ամէն բան:

Բ- Կը պատմէք զրեթէ ամէն բան:

Գ- Կը պատմէք որոշ բաներ:

2) Հաւաքոյթի մը ընթացքին անակնկալի կու գաք տեսնելով, թէ ձեր բարեկամուհին ձեր հագած հագուստէն հագած է.

Ա- Ձէք զարմանար, քանի որ ընկերուհի էք եւ նոյն ճաշակը ունիք:

Բ- Կը ժպտիք, կարեւորութիւն չէք տար:

Գ- Գուրք ձեզի հարց կու տաք՝ արդեօք որո՞ւ աւելի վայելած է հագուստը:

3) Ձեր բարեկամուհին զաւակները տիպար աշակերտներ են դպրոցը, իսկ ձերինները՝ ոչ.

Ա- Իր փորձառութենէն կ'օգտուիք:

Բ- Կ'ուրախանաք անոր հաշուոյն:

Գ- Եթէ անոնք յաջող աշակերտներ են, ձերիններն ալ փայլուն մարզիկներ են, կը մտածէք:

4) Ձեր բարեկամուհին կը խոստանաք միասին շարժապատկերի սրահ երթալ, բայց ձեր ամուսինը կ'առաջարկէ գլուխ-գլխի ընթրիք մը՝ ձեր նախասիրած ճաշարանին մէջ.

Ա- Ձեր խոստումէն ետ չէք դառնար եւ շարժապատկերի սրահ կ'երթաք:

Բ- Իրականութիւնը կ'ըսէք եւ կը խնդրէք, որ ուրիշին հետ շարժապատկերի սրահ երթայ ան:

Գ- Կը հեռաձայնէք ըսելու համար, թէ... հիւանդ էք:

5) Ձեր բարեկամուհին ձեր ուշադրութեան կը յանձնէ, որ՝ քիչ մը զիրցած էք.

Ա- Կը նեղանաք նկատողութենէն:

Բ- Կ'ընդունիք, քանի որ իրականութիւն է:

Գ- Անմիջապէս կը հակադարձէք՝ «Այո՛, բայց ոչ քեզի չափ»:

6) Ձեր բարեկամուհին վերջին վայրկեանին կը յետաձգէ ձեզի հետ ընթրելու ծրագիրը, քանի որ համակրելի պաշտօնակից մը զինք ճաշարան կը հրաւիրէ.

Ա- Կը նեղանաք, բայց ցոյց չէք տար:

Բ- Կը մաղթէք, որ լաւ ժամանակ անցընէ:

Գ- Պայման կը դնէք, որ յաջորդ օրը մանրամասնօրէն պատմէ այդ հանդիպումին մասին:

7) Կը մոռնաք ձեր բարեկամուհիին տարեդարձը շնորհաւորել.

Ա- Շատ յանցաւոր կը զգաք եւ ձեր «մեղքը քաւելու» համար թանկարժէք նուէր մը գնելով կու տաք անոր:

Բ- Պատահեցաւ եւ վե՛րջ:

Գ- Այս ձեւակերպութիւնները սիրողը չէք:

8) Ձեր բարեկամուհին կը յայտնէ Գանատա հաստատուելու իր մտադրութիւնը.

Ա- Ձեր քուր փախցնելու չափ կը յուզուիք:

Բ- Ուրախ էք իր հաշուոյն, բայց տխուր՝ ձեր հաշուոյն:

Գ- Երանի կու տաք եւ կ'ափսոսաք ձեր միօրինակ կեանքին համար:

#### \*ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

\* Եթէ պատասխաններուն մեծամասնութիւնը «Ա» է.- Ձեզի համար բարեկամութիւնը սրբազան է եւ պատրաստ էք ամէն բան ըսելու ձեր ընկերութիւնը փնտռած անձին:

Ուշադիր էք անոր բոլոր խօսքերուն եւ պատրաստ էք որեւէ ատեն անոր օգնութեան հասնելու: Բայց անգիտակցաբար նոյն կեցուածքը կ'ակնկալէք իրմէ, քանի որ ձեր կարգին գուրգուրանքի կարիքը ունիք: Քիչ մը հեռաւորութիւն պահեցէք անոր հետ՝ թէ՛ իր եւ թէ՛ ձեր անկախութիւնը պահպանելու համար: Նուազեցուցէք հեռաձայններուն քանակը եւ ձգեցէք, որ երբեմն ալ ինք ձեզ փնտռէ ու կապուի ձեզի հետ:

\* Եթէ պատասխաններուն մեծամասնութիւնը «Բ» է.- Ամէն մարդ կը ցանկալ ձեզի պէս բարեկամուհի մը ունենալ: Բարեկամութիւնը մեծ արժէք ունի ձեզի համար, բայց գիտէք ձեր հեռաւորութիւնները պահել՝ ձեր անհատականութիւնը չկորսնցնելու եւ չազդուելու համար: Ձեր բարեկամուհին կ'ընդունիք այնպէս ինչպէս որ է, իր թերութիւններով եւ առաւելութիւններով, աշխարհին բացուած եւ հանդուրժող:

\* Եթէ պատասխաններուն մեծամասնութիւնը «Գ» է.- Կը պաշտէք ձեր բարեկամուհին, բայց ձեր անգիտակցութեան մէջ հակուած ունիք տեւաբար անոր հետ համեմատուելու: Աշխարհի բոլոր բարիքները կը ցանկաք անոր, բայց քիչ մըն ալ կը նախանձիք: Ձեզի համար շատ կարեւոր է անոր կարծիքը, յաճախ կը փորձէք նմանիլ անոր՝ որդեգրելով թէ՛ անոր գաղափարները եւ թէ՛ նիստն ու կացը:

### ՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հացը մարդու անունըին ամէնէն կարեւոր եւ պիտանի մէկ մասը կը կազմէ եւ այս իսկ պատճառաւ, աշխարհի վրայ, ամենուրեք, ան քաջածանօթ է ամէն անհատի՝ մեծերէն մինչեւ պզտիկը:

Արդ, ան կը դառնայ միանգամայն կենսական՝ մեր ապրուստին համար:

Արդեօք ի՞նչ է անիկա եւ ի՞նչ նիւթ է կը բաղկանայ:

Հացը առհասարակ ցորենի հատիկներու աղուած ալիւրին փուռին կամ թոնիրին մէջ թխուած ու եփուած խմորն է՝ տարբեր ձեւերով:

Այս պարագաներու տակ, հետաքրքրական է գիտնալ ցորենի պատմութիւնը:

Ըստ պատմական տուեալներուն, Քրիստոսէ հինգ հազար տարի առաջ, ցորենը մուտք գործեց Եթովպիոյ բարձրավանդակներէն դէպի Նեղոսի հովիտը:

Եւ Նեղոս գետը յորդիլ սկսաւ Եթովպիոյ սովորական անձրեւներուն պատճառաւ, ու հեղեղներուն հետ ցորենի հատիկներ Եթովպիայէն Եգիպտոս եկան ու ապա հին Եգիպտոսի Կահիրէի արտեւրուն մէջ:

Այս առթիւ, Հերոտոթ՝ պատմաբաններու նշանաւոր հայրը, 484 թուին Ն. Ք., կ'ըսէ թէ այն ատենները Եգիպտոսի կը կաղապարէին կաւը իրենց ձեռքերով եւ կը խմորէին հացը իրենց ոտքերով:

Միաժամանակ, պէտք է ի մտի ունենալ թէ հացը հին ատենները Եգիպտոսի ընթացիկ դրամը կը կազմէր: Այսպէս՝ 1618 թուին Ն. Ք. աւազ քահանայի մը տարեթոշակն

էր 900 լաւորակ հացի նկանակներ եւ 36,000 ալ տափակ, չոր ու կոշտ նկանակներ:

Հրեաները՝ երբ Եգիպտոսի հպատակներն էին, սորվեցան այնտեղ հաց շինելու արհեստը: Եւ սակայն, երբ անոնք աճապարանօք Եգիպտոսէն կ'ելլէին Մովսէսի խնամատրութեան տակ Պաղեստին երթալու համար, ժամանակ չունեցան թթխմորելու իրենց հացը եւ զայն կերան անխմոր, այնպէս ինչպէս զայն պատրաստած էին Եգիպտոսի մէջ, իրենց ելքէն առաջ:

Ահա այս կապակցութեամբ, ամէն տարի, Պասէքի տօնին, հրեաները անխմոր հաց կ'ուտեն առ ի յիշատակ այդ պատմական օրին:

Այսուհանդերձ, միայն հրեաները չէին որ հաց պատրաստելու եւ եփելու արհեստին գիտակ էին: Նկատելի էր որ Յուլիոս Կեսար երբ յարձակեցաւ Եգիպտոսի վրայ 47-ին Ն. Ք. ցորենի հացը տակաւ առ տակաւ տարածուեցաւ հռոմայեցիներու աշխարհին մէջ:

Շահեկան է նշել որ 13-րդ դարուն, Ֆրանսան քսան տարբեր տեսակ հաց ունէր, ինչպէս՝ պալատի հաց, Պապի հաց, ասպետի հաց, ծառայի հաց, եւ այլն: Այն ատենները, զինաձեւ եւ քնարաձեւ հացեր ալ կ'եփուէին: Հարսանիքներու առթիւ տրուած խնձոցներու մէջ, նախապէս պատրաստուած մատանէ ձեւ եւ իրար փակած օղակաձեւ հաց կը հրամցնէին:

Իսկ հասարակ ժողովուրդին համար տարբեր ձեւերով հաց կը պատրաստէին, ինչպէս՝ մոլորակաձեւ, գնտաձեւ, եւ այլն:

### ՁԱՆՁՐՈՅԹԸ ՀԵՌԱՑՈՒՐ ԵՐԵՒԱՅԷՂ

Յաճախ երեխադ ձանձրոյթէն կը գանգատի, տան մէջ շուարած, նեղացած կը թափառի, լարուած վիճակ մը յառաջացնելով ընտանիքի բոլոր անդամներուն մօտ: Ստորեւ կը ներկայացնենք կարգ մը առաջարկներ օգնելու համար երեխայիդ՝ իր ժամերը դասաւորելու եւ այդ ժամանակէն օգտուելու:

\* Յանկ մը պատրաստէ իրեն հաճելի եղող գուարճալի աշխատանքները ընդգրկող եւ այդ ցանկը կախէ իր սենեակին կամ խոհանոցին մէկ անկիւնը: Երբ ան ձանձրանայ, կանչէ զինք ցանկը վերաքաղ ընելու, որպէսզի ընտրէ իրեն յարմար եղածը:

\* Օրուան տրամաբանական ժամանակ տրամադրէ պզտիկիդ համար հեռատեսիլ դիտելու կամ համակարգիչով խաղալու եւ իր ունեցած արդի թեքնոլոգիի բոլոր միջոցներով զբաղելու, ինչպէս Փլէյ Սթիչընը եւ այլ տեսակի խաղեր: Ինչպէս նաեւ քաջալերէ զինք իր երեւակայութիւնը գործածելու՝ հնարելու համար զբաղումի միջոցներ:

\* Օրուան մէջ նուազագոյնը մէկ ժամ պէտք է տրամադրէ մարմնային ջանք թափելու, ինչպէս հեծանիւ քշել, պասքէթ կամ ֆութպոլ խաղալ, ճիւղա կամ այլ տեսակի մարզաձեւեր կիրարկել, որովհետեւ մարզանքը օգտակար է եւ մեծերուն եւ փոքրերուն առողջութեան համար:

\* Ժամանակ տրամադրէ՛ իր

հետ խաղալու (օրական տասը վայրկեանն իսկ բաւարար է) կամ իր քով մնացիր երբ ան ազատօրէն կը զբաղուի:

\* Երբ ան շատ գանգատի ձանձրոյթէն, կանչէ զինք որպէսզի տան կարգ մը պարտականութիւններուն մէջ մասնակից դառնայ քեզի:

\* Ապահովէ ժամանցի զանազան աշխատանքներ, ինչպէս գծազրուութիւնն ու ձեռալին աշխատանքները, որպէսզի ան զբաղի արձակուրդի օրերուն:

\* Քաջալերէ զինք պզտիկներուն սիրելի եղող աւանդական խաղերու միջոցով իր բերրի երեւակայութիւնը աճեցնելու, օրինակի համար պուպրիկով, պզտիկ ինքնաշարժներով կամ զինուորներով զբաղելու:

\* Շաբթուան մէջ մէկ կամ երկու անգամ իր դասընկերները կամ տարիքով փոքր ազգականները հիւրընկալէ, ինչ որ կը վարժեցնէ զինք ունենալու ընկերային ջերմ կեանք մը:

\* Ազգականներէն մին զինք թող հիւրընկալէ մէկ օրուան կամ մէկ գիշերուան համար, ինչ որ փոփոխութիւն կը յառաջացնէ իրեն համար սովորութիւն դարձած տան մթնոլորտէն դուրս:

\* Միասնաբար գացէք սինեմա, ճաշարան մը կամ ժամանցի այլ վայր մը, անշուշտ այս բոլորը ձեր կարողութեան սահմաններուն մէջ:

**ՄԱՍԻՍ** ՀԱՐԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 100,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----



### Էջմիածինի մէջ կատարուեցաւ Եպիսկոպոսաց Ժողովի բացումը

Մարումակուած էջ 1-էն

է այսօր բոլորիս համար: Առաջին անգամ Եպիսկոպոսաց Ժողով է գումարում Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եպիսկոպոսաց դասի մասնակցութեամբ», - բանալով ժողովը՝ ըսաւ վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդը:

Ժողովի մասնակիցներուն ողջոյնի խօսք ուղղեց Սերժ Սարգսեան՝ վերջիշեղով այն կարեւորագոյն առաքելութիւնը, որ դարեր շարունակ կատարած է եկեղեցին մեր ժողովուրդի եւ մեր հայրենիքի համար - «Յիրաւի դարակազմիկ իրադարձութեան ականատեսն ենք դառնում: Հանգամանքների բերումով դարեր շարունակ, մասնաւորապէս վերջին վեց հարիւրամեակների ընթացքում, հարաւոր չի եղել գումարել Հայոց եկեղեցու Եպիսկոպոսաց դասի ժողով: Ուրախութեամբ պէտք է արձանագրեմ, որ այժմ հարաւորութիւն է ստեղծուել յաղթահարելու այդ հիմնախնդիրը»:

Սերժ Սարգսեանը նաեւ վստահութիւն յայտնեց, որ ժողովը «կ'ազդարարի նոր առաջընթաց հայոց հոգեւոր կեանքում եւ թոյլ կը տայ համայն հայութեանը նոր եռանդով ու լիցքով լծուել ազգային իղձերի իրականացմանը»:

Մինչեւ Սեպտեմբեր 27-ը շարունակուելիք Եպիսկոպոսաց Ժողովի ծրագիր-օրակարգին մէջ նշուած է, մասնաւորապէս, երկու հարց. Յեղասպանութեան գոհերու սրբադասման հարցը եւ Սուրբ մկրտութեան ծիսական կանոնական արարողակարգին առնչուող խորհուրդի փաթեթը:

Մեծ Եղեռնի գոհերու սրբադասման անդրադարձաւ նաեւ Հայաստանի նախագահը - «Հայոց յեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշեմին մեր ողջ ժողովուրդը շարունակում է իր «ոչ»-ը հնչեցնել մարդկութեան դէմ յանցագործութիւններին: Դա մեր պարտքն է մեր նախնիների, մեր անմեղ գոհերի եւ ամբողջ մարդկութեան հանդէպ, որպէսզի ապագայում հարաւոր լինի կանխել նոր յեղասպանութիւնների կրկնութիւնը: Այս օրերին Սիրիայում շարունակուած է կործանարար քաղաքացիական պատերազմը, որը դարձաւ սիրիահայ համայնքի ծանրագոյն փորձութիւնը: Սիրիայում կատարուող մեր ամենամեծ ցաւն է եւ մեր ամենօրեայ թիւ մէկ մտահոգութիւնը: Սիրիայի ժողովուրդը հայերիս համար ամենածանր պահին զրկաբաց ընդունեց յեղասպանութիւնից մագապուած եղածներին եւ իր ունեցածը կիսեց մեզ հետ: Մենք ցանկանում ենք, որ ստեղծուած իրավիճակի համար հնարաւորինս արագ քաղաքական հանգուցալուծում գտնուի եւ դադարեցուի արիւնահեղութիւնը մեր բարեկամ երկրում»:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջին իր խօսքին մէջ ներկայացուց իր պատկերացումն ու տեսլականը եկեղեցական բարեփոխումներու մասին - «Ինչ կը հասկնանք «բարեկարգութիւն» ըսելով. սոսկ անցեալի աւանդութեանց վերականգնումը, մեր եկեղեցու ծիսական կարգին վերադասաւորումը կամ կրճատումը, լոկ լեզուի փոփոխութիւնը, եւ կամ ծիսական նոր համակարգի մը հաստատումը՝ մեր կեանքին ներկայ դրուածքին պատշաճող: Մեր հայեցողութեամբ, բարեկարգութիւնը ըստ էութեան պէտք է ըմբռնել որպէս եկեղեցու կեանքին ու մտածողութեան, վկայութեան ու առաքելութեան վերարժեւորումը, վերանորոգումը ու վերակենսաւորումը: Արդարեւ, եկեղեցին կը վերածուի թանգարանի, եթէ չվերանորոգուի»:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Առաջին իր խօսքին մէջ ներկայացուց իր պատկերացումն ու տեսլականը եկեղեցական բարեփոխումներու մասին - «Ինչ կը հասկնանք «բարեկարգութիւն» ըսելով. սոսկ անցեալի աւանդութեանց վերականգնումը, մեր եկեղեցու ծիսական կարգին վերադասաւորումը կամ կրճատումը, լոկ լեզուի փոփոխութիւնը, եւ կամ ծիսական նոր համակարգի մը հաստատումը՝ մեր կեանքին ներկայ դրուածքին պատշաճող: Մեր հայեցողութեամբ, բարեկարգութիւնը ըստ էութեան պէտք է ըմբռնել որպէս եկեղեցու կեանքին ու մտածողութեան, վկայութեան ու առաքելութեան վերարժեւորումը, վերանորոգումը ու վերակենսաւորումը: Արդարեւ, եկեղեցին կը վերածուի թանգարանի, եթէ չվերանորոգուի»:

### «ԱՌԱՋԻՆ ԾԱՂԻԿ» ԴԱՐՁԱԾ

Մարումակուած էջ 6-էն

Նրա խօսքով՝ ԵՄ-ն արդէն նախաձեռնել է մոլորակական զինների ներկրման քուտտաների աւելացման գործընթաց, որպէսզի փոխհատուցի ռուսական շուկայի փակման կորուստները՝ ընդ որում՝ Ֆիւլէի խօսքով՝ Բրիւսելը ներկայում չի ծրագրում համանման միջոցառումներ ձեռնարկել ուկրաինական արտադրանքի նկատմամբ, քանի որ իրավիճակը ռուսական մաքսատանը կարգաւորուել է: Միաժամանակ նա նշել է, որ ԵՄ-ն կարող է սկսել եւ կիրառել Ուկրաինայի հետ Ասոցացման համաձայնագրի (որը նախատեսում է ազատ առեւտրի գոտու ստեղծում) դրոյթների զգալի մասը նախքան փաստաթղթի վաւերացման գործընթացի աւարտը:

Ինչպէս նկատուած ենք, նախկին խորհրդային պետութիւնները վերջին օրերին ենթարկուած են Մոսկուայի կողմից աննախադէպ ճնշումների, բայց այս երկրները, ի պատիւ իրենց, դիմակայում են եւ այս երկրների ներսում հասարակութիւն-ընդդիմութիւն-իշխանութիւն:

Թիւն նախանձելի միանութիւն կայ եւրախնտեգրման ճանապարհից չչեղուելու եւ Ռուսաստանի սադրանքներին ու ճնշումներին չենթարկուելու հարցում: Սա է ամենանախանձելին, մի բան, որ Հայաստանում ոչ միայն գոյութիւն չունի, այլեւ մեր քաղաքական դաշտում Սերժ Սարգսեանին դեռ նախանձողներ էլ կան, որ նրան է բախտ վիճակուել Հայաստանը Մաքսային միութիւն մտցնել, այլ ոչ թէ իրենց...:

Հայաստանը Մոսկուային առանց դիմակայելու փորձի ընտրեց Մաքսային միութեանն անդամակցելու ճանապարհը այն պայմաններում, երբ դեռ պարզ չէ, թէ Պուտինի եւրասիական ծրագրերն ընդհանրապէս կեանքի կը կոչուեն միւս յետխորհրդային պետութիւնների այսպիսի դիմակայութեան պայմաններում, թէ՛ ոչ: Այլ կերպ ասած, «առաջին ծաղիկ» դարձած՝ Հայաստանը զրկեց իրեն ԵՄ Ասոցացման նախատորագրման արդէն իսկ զրեթէ պատրաստ համաձայնագրի ընդունումից եւ դրա կիրառումից...:

«ՀԱՅԵԼԻ»

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
 Զետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
 ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
**ԵՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680**

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
 PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ  
 ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

**Մանրամասների համար հեռաձայնել՝**  
**(818) 246-0125**

**ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ**  
 Ընկ. Յարութ Աճէմեան ընդ Օր. Հիլտա Յարութիւնեան  
 Ամուսնացեալք 21 Սեպտեմբեր, 2013, Հոլիվուտ  
 «Մասիս» ջերմօրէն կը շնորհաւոյն ամուսնացեալ զոյգը եւ անոնց ծնողները, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. ընկեր Սեդրակ եւ Ալին Աճէմեանները:

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
 Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՉԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
**626-354-5924 • vamedia@yahoo.com**

### ԱՐԱՐԱՏԻ ՀԱԿԱՌԱԿ ԵՐԵՍԸ

Շարունակում է 13-էն

ՀԱՅԵՐՐ, Հայաստանի ու սփիւռքի հայեր, մէկ առ մէկ ու բոլորով ԱՅՅԵԼԷՔ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, շրջէ՛ք ԿԱՐՍԻ, ՎԱՆԻ բացառիկ անճաշակ ու աղտոտ փողոցներով, տեսէ՛ք ձեր փոխ առածն ու նրանցը: Տեսէ՛ք, որ նրանք իրենց հուլիանը հաւատարիմ են, նրանք գիտեն, թէ ովքեր են: ՍԱԿԱՅՆ ՄԵՆՔ, ՈՎՔԵՐ ԵՆՔ ԱՅՍՕՐ մենք: Մենք անգամ

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ մեր պարզ ՝ քթածակն՝ ենք կորցրել: Արդեօք ԲԱՅԱՌԻԿ ԹԱՆԿ ԳԻՆ ՁԵՆՔ ՎՃԱՐՈՒՄ օճառի ու հազուադէպ դիմաց...

Իմ իմաստուն մանուկ, իմ աղանի խորագէտ ազգ, ԴՈՒ ՊԱՐՏԱՒՈՐ ԵՍ ՍԱՌԸ ԳԼԽՈՎ ու ԾԱՅՐԱՅԵՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՐՎԵՐԱԳՏԵԼ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԴ: ՊԱՐՏԱՒՈՐ ԵՍ ՔՈ ԻՐԱԿԱՆ ԷՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՍՏԱՆԱԼ:

ՊԱՐՏԱՒՈՐ ԵՍ տեսել, որ Սարգարապատի կուրծքը ՀԵՆՑ ՀԻՄԱ է, որ երկրորդ Սարգարապատի ժամանակ գուցէ էլ չունենաս:

Չարենցի տունը

Դու պարտաւոր ես հասկանալ, որ ՀԵՆՑ ՀԻՄԱ մի նոր դաւանանքի կարիք ունես եւ այդ դաւանանքը քո ԻՍԿԱԿԱՆ ԷՆՈՒԹԻՒՆ ԻՄԱՆԱԼԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ:

Հէնց այսօր, երբ ոստիկ քո ներսում եղած ճիւղերի ձեռքով է քեզ արնաքամ անու՛մ՝ կիսատ մնացածը լրացնելով ու քեզ ստիպելով լքել քո երկիրը, հէնց այսօր, երբ դու կարծում ես, թէ այլ ճար չունես, քան փախչել քո բնօրրանից, այցելի՛ր ԱՐԵՒՄՏԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ: Քո կոտորուած ու լքուած հոգու միակ դարմանն այնտեղ է: Այցելի՛ր ՍԱՌԸ ԳԼԽՈՎ ու առանց լաց ու կոծի: Ինքդ քեզնից չես փախչի, եթէ անգամ Ձեխիան, կամ Բուրկիւնա Ֆասօն քեզ քաղաքացիութիւն չնորհի:

ՍԹԱՓՈՒԹԵԱՆ վերջին կայանը ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԷ:

ԳՆԱ՛ ՊԱՊԵՐԻԴ ԵՐԿԻՐԸ, ԳՆԱ՛ ՈՒ ՏԵՍ ԱՐԱՐԱՏԻ ՀԱԿԱՌԱԿ ԵՐԵՍԸ...

Երեւան, Հայաստանի Հանրապետութիւն

### ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐ

Շարունակում է 13-էն

րիններու կարօտը, եւ այդ կարօտին ջերմութիւնը իսկենտէրը կ'ապրէր ու կը կիսէր հայրենակիցների հետ: Ծաղիկը Հայաստան ծնած ու մեծցած էր: Դէմքին վրայ մեղմ ժպիտ մը գծուած էր միշտ, բայց աչքերուն մէջ կար անձկութիւն, որուն խորքը գերծ չէր վախի ու մտահոգութեան զգացումներէն: Պիտի իմանայի, թէ իրենց տղան Զարաբաղի ձակատին վրայ էր՝ որպէս բաջամարտիկ: Ծաղիկը հպարտ էր, բայց նաեւ մայր էր: Ունէր մտահոգութիւնը եւ իւրաքանչիւր եկող-գացողէ պիտի ուզէր իմանալ իր տղուն որպիսութեան մասին:

Վանաստան մէջ ելեկտրակա-նութիւնը քիչ մը աւելի լաւ էր, բայց տաք ջուրը, ինչ խօսք, դժուար իրականայի: Ծաղիկը պզտիկ ամանին մէջ քիչ մը ջուր պիտի տաքցնէր, որպէսզի առաւօտները լուացուինք: Հիւր էի, եւ իրենք ամէն ինչ պիտի ընէին, որպէսզի ես հանգիստ գտայի:

Ներսէս արք. Պոզապալեանը Հայաստանի մէջ մեր ընկերակցութեան նախագահն էր: Հայրենիքի ու եկեղեցիի սէրը իր սրտին ու հոգիին մէջ՝ իր կեանքը տրամադրած էր Քրիստոսի եւ հայ ժողովուրդի ծառայութեան: Կը սիրէր Աստուածաշունչը եւ Չատագովն էր քրիստոնէական դաստիարակութեան: Հայաստան ներգաղթած էր Պէջրուսթէն, յիսունական տարիներու վերջաւորութեան: Եթէ մեր յարաբերութեան եւ գործակցութեան վրայ կար Պէջրուսթի ուժականութիւնը, բայց երկուքս ալ կեղերոնական բարձրագոյն վարժարանէն շրջանաւարտ եղած էինք, ուստի մեր խօսակցութիւններուն նիւթն էր նաեւ անցեալէն պատառիկներ՝ յուշերը բերելով որպէս քաղցր օրերու իրականութիւն:

Վաչագան Յովհաննէսեանը բանաստեղծ էր եւ ստանձնած՝ գրասենեակին տնօրէնութեան պարտականութիւնը: Սասունցի էր, եւ հայրենասիրութիւնը իրեն համար սրբութիւն էր: Զգացական մարդ էր, ու հայրենիքը իր ամբողջ հուլիան էր, եւ այդ զգացումները յաճախ կ'արտայայտէր բանաստեղ-

ծութիւններուն մէջէն: Կ'ապրէր հայրենիքի տազնապը եւ դժուարութիւնները: Ո՛ր օրերը աւելի լաւ են Վաչագան, խորհրդային ժամանակաշրջանը, թէ՛ հիմա՝ անկախութիւնը: Գիտէր, թէ կը փորձէի գինք: Չունէր արագ պատասխան: Դէմքին վրայ կը գծէր պզտիկ եւ մանուկի անմեղ ժպիտ մը

Աչքերը կը լեցուէին, չեմ գիտեր՝ ուրախութեան, թէ՛ տխրութեան արցունքներ էին, եւ կ'ըսէր համոզուած՝ Կարեւորը հայրենիքը պահելն ու կերտելն է: Եսային ալ Այնճարէն էր եւ Հայաստան հաստատուած էր ներգաղթի օրերուն: Կ'ապրէր էջմիածնի մէջ եւ ունէր հանգստաւէտ տուն: Մայր Աթոռի պահակախումբին ընդհանուր պատասխանատուն էր: Եսային ալ ունէր իր պատմութիւնը: - Երբ նոր եկանք Հայաստան՝ ներգաղթի օրերուն, կեանքը շատ դժուար էր: Այն չէր, ինչ որ մեզի ըսած էին: Բայց շինեցինք մեր տունները եւ կեանքերը: Կը բաժնեկցէր Եսային որպէս ապրած կեանքի անուժ եւ դժուար օրեր: Եսային նաեւ կը բաժնեկցէր իր տունը եւ հիւրասիրութիւնը: - Միասին հաց պէտք է ուտենք, իւրաքանչիւր այցելութեանս: Կը վաչագանը եւ պաշտօնականը: Կարելի չէ մոռնալ Վաչագանին զգայացունց եւ երկարաշունչ բաժակաճառերը: Այդ բաժակաճառերուն եւ խորովածին շուրջ աւելիով կը զարգանար բարեկամութիւնը, բայց կը կորսուէր խմուած բաժակներուն քանակը: Եւ չէին ուշանար սրբազանին զգուշացումները...: - Վաչագան, կամաց-կամաց, հա՛...:

Բայց ապրեցայ հայրենիքը՝ մէկ-մէկ, նաեւ ամբողջութեամբ: Ամէն առաւօտ հասանելի-անհասանելի գեղեցիկ Արարատը, պուլպուլակներու մէջէն հոտոյ սառը ջուրը, էջմիածնի հոգեպարար պատարագները եւ Լուսինէ Զաքարեանի ձայնով հնչած շարականները: Ապրեցայ նաեւ իւրաքանչիւր հայորդիին հետ հայկական կեանքը հայրենի հողին վրայ: Զգացի, թէ ինչ կրնայ նշանակել քու հողի վրայ ըլլալու իրականութիւնը, եւ այդ հողէն ուժ առնելով ապրիլ

### ԻՆՉՈՒՒ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱՆ ՍԱՔՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՆ ԳՐԵՐ ՈՒ ԽՕՍԻՐ

Շարունակում է 14-էն

րահաստատել դպրոցներու մէջ: Ե՞րբ վերջ պիտի տրուի այս ազգավնաս, ազգակործան, հայրենախոյս խատառակ վիճակին: Քանի՞ տարի դեռ պիտի լսենք անճոռնի ոչ հայերէն ծիծաղելի բառերը:

Ժամանակն է որ նախագահի հրամանագրով հաստատուի վերահսկիչ մարմին մը, ներառեալ սփիւռքահայերը, որուն իրաւասութիւն տրուի:

1. Մաքրագտելու հայերէն բառապաշարը:

2. Հրատարակելու հայերէն մաքուր բառապաշարի ցանկը:

3. Վերահաստատելու դասական-Մեսրոպեան ուղղագրութիւնը, որպէսզի Հայաստան-Արցախի եւ սփիւռքի մէջ նոյն ուղղագրութեամբ նոյն հայերէն բառերը գործածեն:

4. Օրէնքով տուգանելու այն բոլոր պետական եւ ոչ պետական նախարարութիւններն ու ձեռնարկատիրութիւնները, կազմակերպութիւնները, վաճառատուները, կրպակները, հեռատեսիլի կայաններն ու թերթերը, որոնք ոչ հայերէն անուններ ունին կամ խառնա-

ծին բառեր կը գործածեն «սոցիալական» տրանսբորդ, տուրիստական» աւիաուղի, էնէրգետիկ, իմֆորմացիոն» եւ այլն:

Այս հիմնարկ-կազմակերպութիւններու եւ անձերու տրուի 6 ամիս պայմանաժամ, անուանակոչումները հայացնելու եւ ուղղելու իրենց սխալները, այլապէս ենթարկել ծանր տուգանքի: Նոյնպէս բոլոր կրթական համալսարանական հիմնարկութիւններու անուանակոչումները (դեկան, ուէկտոր, ֆակուլտետ, ժուռնալիստական, ինֆորմացիոն հայացու եւ այլն) պէտք է անյապաղ հայացուին: Այնպիսի տուգանք սահմանուի, որ տարի մը ետք այդ կառույցը ենթարկուի անակոչութեան կամ առ զրաւման:

22 տարի բաւարար է ուժացման եւ այլասերման առաջնորդող գործելակերպի:

Այո՛, ունեցած են անգործունեայ «Լեզուի Վարչութեան» տեսչութիւն - նոյնպէս ներկայիս «Լեզուի վարչութիւն»ը անաշխատունակութենէ կը տառապի: Չեմ կարծեր որ պատասխանատու անձը «Լեզուի մաքրութեան վտանգաւոր» գործին յանդգնի դիմել, որպէսզի չպաշտօնագրկուի:

### «ՏԱՐԵՂԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ»

Շարունակում է 16-էն

րին մօտեցաւ Տէր Արսէն քահանայ, Աւետարանը ձեռքին: Տէր Հայրը բարի գալուստ ասաց, ապա աղօթեց Արքայի արեւշատութեան համար, շնորհաւորեց բարեբաստիկ տարեդարձը եւ աւելացրեց, որ հայրութիւնը մի քանի դար է ինչ խաղաղ ու հանգիստ ապրել է այս հիւրընկալ երկրում, եւ վայելել է պարսիկ ժողովրդի եւ պետութեան հովանաւորութիւնը: Տէր Հօր սրտաբուխ խօսքերը եւ եկեղեցում վառուղ բազմաթիւ մոմերը խորապէս տպաւորեցին պաշտօնական հիւրերին: Ապա սկսուեց հիւրասիրութիւնը: Երիտասարդ տղաներ եւ աղջիկներ սիրալիր ու ժպտեցնեց թէյով եւ անուշեղէններով անվերջ

հիւրասիրում էին ներկաներին: Հանդիսութիւնը տեսեց մինչեւ երեկոյան ժամի 4-ը: Հիւրերը խորապէս տպաւորուած գոհունակ սրտով հրաժեշտ տուեցին Քալաւա գիւղի հայութեան: Յաջող այդ տօնակատարութեան համար մեր հիւրերը զեկուցեցին Թեհրան եւ գրուեց նաեւ մամուլում:

Այս նման բազմաթիւ ձեռնարկներ եւ միջոցառումներ ապացուցին էին այն երեւոյթի, որ հայ ժողովուրդը աշխարհի որ ծայրամասում էլ որ գտնուի, հաւատարիմ է իրեն հիւրընկալող երկրին ու ժողովրդին: Երկարաբար հայն ուր որ գնացել, կառուցել, շինացրել եւ օգնել է այդ երկրի զարգացման եւ առաջադիմութեան: Կենդանի վկաները առկայ են ամենուր:

հայկական կեանքը՝ հայերէն խօսելով: Ապրեցայ այս բոլորին մէջ իմ ըլլալու գերակայութիւնը: Ներսէս սրբազան, Վաչագան, Եսայի եւ իսկենտէր... բոլորն ալ մեկնեցան՝ այս աշխարհէն, բայց մեկնեցան ունենալով գոհունակութիւնը, թէ ապրեցան հայրենի հողին վրայ ու անոր գիտակցութեամբ: Ուրախ թէ տխուր, դժուար թէ դիւրին, անոնք ապրեցան՝ իրենց ունենալու եւ զգալու ինքնագիտակցութիւնը: Անոնք ապրեցան գոհունակութիւնը եւ ուժը՝ հայերէն խօսելով, Հայաստանը ապրելով եւ հայ մշակոյթն ու կեանքը իւրացնելով: Բայց ըրին աւելին: Այս՝ գոհունակութիւնը եւ ուժը բաժնեկցեցան ինծի հետ:

-Դուն հայերէն կը խօսիս... Այո՛, բայց խօսեցայ իմ հողիս վրայ, ինչ որ տարբեր է: Որովհետեւ հողէն առի՛ գոհունակութիւնը

եւ ուժը, նաեւ՝ ինքնութիւնը, եւ՝ նոյնինքն այդ ինքնութեան տուած մշակութային ջերմութիւնը:

Արդէն անցան քսաներեք տարիներ Հայաստանի անկախացումէն ու իմ հայրենի պարտականութենէս: Բայց կան տակաւին վաչագանին արցունքոտ աչքերը, որոնք տակաւին ուժգնութեամբ ու նաեւ ջերմութեամբ կը նային ինծի: Կը զգամ, թէ Վաչագանը չի քաջալերեր զիս, ինչպէս որ ես իրեն ըրի: Ան հաստատ կը պատուիրէ՝ կարեւորը հայրենիքը պահելն է:

-Դուն հայերէն կը խօսիս: Բայց հայուն համար այսօր կայ խօսելէն աւելի մեծ մարտահրաւերը՝ պահելը:

Պահել հայուն հայրենիքը, հայ լեզուն եւ հայ մշակոյթը: Եւ սպիկա միայն խօսքով եւ խօսելով չէ, այլ նաեւ՝ ապրելով եւ ապրեցնելով:



**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**

ԵՒ "Բաջ Նազար" հանդես ու հեռուստաժամը  
Ներկայացնում է



**14-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ**

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ԿԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ

**Կիրակի, Սեպտեմբեր 29, 2013, ժամը 2-12:00**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**

Since 1999

and "KACH NAZAR" Magazine & TV Show

Presents **14<sup>th</sup> ANNIVERSARY**  
**NATIONWIDE**


**TELETHON**  
**ON SUNDAY,**  
**SEPTEMBER 29, 2013**

From 2:00pm-12:00am

**FOR DISABLED CHILDREN AND FOR THE  
RESTORATION OF CHILDREN'S HOMES**

P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880

E-mail: Forourkids99@gmail.com • Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity



**AMGA CHANNEL 380**  
**AABC CHANNEL 384**  
**VISION TV CHANNEL 382**

**GENERAL SPONSORS**

<b>WELLS FARGO</b>	<b>ՀԱՅ ԴԵՂԱՏՈՒՆ</b> ՀԱՅ ԴԵՂԱՏՈՒՆ	Guest of Honor <b>Leroy D. Baca, Sheriff</b> County of Los Angeles Sheriff's Department	Guest of Honor <b>Frank Quintero</b> Glendale City Council Member	<b>AYVAZIAN</b> Realty Management
<b>KOHAR</b> Symphony Orchestra and Choir	<b>KRADJIAN</b> Importing Co., Inc.	Alice Navasargian THE IMMORTALS	<b>Sadaf</b> FOODS	<b>HELEN Bakery</b> Goularyan Family
<b>HAIG PHARMACY</b>	MR. AND MRS. HAROUT AND OZHEN BROUTIAN	MR. GRIGOR AIVAZIAN HONORARY GODFATHER OF ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND	<b>NATURE'S PRIDE</b>	<b>ABALI</b>
<b>SUPER KING MARKETS</b>	<b>Raffi's Place</b> GOURMET CUISINE	MR. AND MRS. GEORGE AND SALPI DADANIAN	<b>GOLDEN FARMS</b>	<b>ԱՐԵՎ. ԱԼԵԿՍԻ ԲԱԿՏԱՆԻԱՆ</b> ԱՐԵՎ. ԱԼԵԿՍԻ ԲԱԿՏԱՆԻԱՆ ԱՐԵՎ. ԱԼԵԿՍԻ ԲԱԿՏԱՆԻԱՆ ԱՐԵՎ. ԱԼԵԿՍԻ ԲԱԿՏԱՆԻԱՆ
<b>United Shipping Group</b> Tel: (818) 291-9303 1307 East Colorado Blvd. Glendale, CA 91205	<b>GLENDALE WEST PHARMACY AND MEDICAL SUPPLY</b>	Sarkis Topalian Tel: 818.246.2070	<b>Yerevan PRINTING</b>	<b>Universal Travel &amp; Tours</b>
				<b>ALBERT BAKTANIAN, M.D.</b> EYE PHYSICIAN AND SURGEON